

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՍՈՒԹՅՈՒՆ

2025

ՀՈՒՂԻՄ

ՔԻՄԻԱ

ԹԵՍ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՞ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Զեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո շմորանաք պատասխանները ուշադիր և խնայելով նշել պատասխանների ձևաթուղթում: Պատասխանների ձևաթողի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

1 Ω°ρ ψήνησις δημιουργία της γεωμητρικής σχέσης που αποτελείται από την περιβάλλοντας την περιφέρεια της γεωμητρικής σχέσης.

- 1) Νομιμή σχέση που αποτελείται από την περιβάλλοντας την περιφέρεια της γεωμητρικής σχέσης
- 2) Νομιμή σχέση που αποτελείται από την περιβάλλοντας την περιφέρεια της γεωμητρικής σχέσης
- 3) Νομιμή σχέση που αποτελείται από την περιβάλλοντας την περιφέρεια της γεωμητρικής σχέσης
- 4) Νομιμή σχέση που αποτελείται από την περιβάλλοντας την περιφέρεια της γεωμητρικής σχέσης

2 Στατιστική σχέση που είναι η μετατόπιση της γεωμητρικής σχέσης.

- 1) Καθημερινή σχέση που αποτελείται από την περιβάλλοντας την περιφέρεια της γεωμητρικής σχέσης
- 2) Αναπότομη σχέση που αποτελείται από την περιβάλλοντας την περιφέρεια της γεωμητρικής σχέσης
- 3) Συνολική σχέση που αποτελείται από την περιβάλλοντας την περιφέρεια της γεωμητρικής σχέσης
- 4) Επιτομή σχέσης που αποτελείται από την περιβάλλοντας την περιφέρεια της γεωμητρικής σχέσης

3 Ω°ρ σωρός είναι οι ομοιότητες που έχουν τα ίδια στοιχεία.

- 1) Cu, Zn, Te
- 2) Mg, Sc, Hg
- 3) Ba, Mn, Au
- 4) Ru, Os, Ag

4 Ω°ρ ιδιότητας είναι η αποτελεσματικότητα της γεωμητρικής σχέσης στην περιβάλλοντας την περιφέρεια της γεωμητρικής σχέσης.

- 1) $^{230}_{88}U$
- 2) $^{230}_{90}Th$
- 3) $^{236}_{90}Th$
- 4) $^{230}_{88}Ra$

5 Ω°ρ σωρός είναι η αποτελεσματικότητα της γεωμητρικής σχέσης στην περιβάλλοντας την περιφέρεια της γεωμητρικής σχέσης.

- 1) $4s^24p^6$
- 2) $3s^23p^2$
- 3) $2s^22p^5$
- 4) $3s^23p^4$

6

Ի՞նչ կապերով են կապված ածխածնի ատոմներն ալմաստում.

- 1) սիզմա և պի կապերով
- 2) համարժեք սիզմա կապերով
- 3) համարժեք պի կապերով
- 4) էներգիայով և երկարությամբ իրարից տարբերվող սիզմա կապերով

7

Ո՞ր շարքում են հետևյալ միացությունների համարները դասավորված ըստ դրանց մոլեկուլներում քիմիական կապի բնեույնության աճի.

1. սիլիցիումի (IV) օքսիդ, 2. ածխածնի (II) օքսիդ, 3. ազոտի (II) օքսիդ
4. ջուր

- 1) 3, 2, 4, 1
- 2) 3, 1, 2, 4
- 3) 4, 3, 2, 1
- 4) 4, 1, 2, 3

8

Բերվածներից ո՞րը պետք է ավելացնել կալցիումի կարբոնատի նոր ստացված սուսպենզիան թափանցիկ լուծույթի վերածելու համար.

- 1) ամոնիակ
- 2) ածխածնի (II) օքսիդ
- 3) ածխածնի (IV) օքսիդ
- 4) ազոտի (II) օքսիդ

9

Հետևյալ նյութերի մոլեկուլներից որոնցո՞ւմ է ազոտի օքսիդացման աստիճանը «-3».



- 1) բ, զ
- 2) ա, բ, ե
- 3) բ, ե
- 4) բ, զ, ե

10

Ո՞ր գործոնից կախված չէ գազի լուծելիության գործակիցը.

- 1) լուծիչի ծավալից
- 2) ջերմաստիճանից
- 3) լուծիչի բնույթից
- 4) ճնշումից

11

Ո՞ր շարք ներառված բոլոր աղերի ջրային լուծույթներում է լակմուսը ներկվում կապույտ գույնով.

- 1) Na_2SO_3 , Na_2CO_3 , HCOONa
- 2) Na_2SO_3 , ZnSO_4 , NH_4NO_3
- 3) CuSO_4 , MgCl_2 , Na_2CO_3
- 4) HCOONa , ZnSO_4 , $\text{Fe}(\text{NO}_3)_2$

12

Բերված գործոններից որո՞նք կարող են արտադրության մեջ իրականացվող
 $\text{N}_{2(g)} + 3\text{H}_{2(g)} \rightleftharpoons 2\text{NH}_{3(g)} + \text{Q}$ ռեակցիայի հավասարակշռությունը տեղաշարժել դեպի աջ. ա) ջերմաստիճանի բարձրացում, բ) ջերմաստիճանի իջեցում,
գ) ճնշման մեծացում, դ) ճնշման փորձացում.

- 1) ա, դ
- 2) բ, դ
- 3) ա, զ
- 4) բ, զ

13

Ո՞ր նյութի լուծույթով պետք է անցկացնել օգոնի խառնուկ պարունակող թթվածինը օգոնից ազատվելու համար.

- 1) կալիումի քլորիդ
- 2) կալիումի հիդրօքսիդ
- 3) կալիումի սուլֆատ
- 4) կալիումի յոդիդ

14

Ո՞ր շարք ներառված բոլոր միացությունները կարող են առաջացնել ջրածնային կապեր սենյակային ջերմաստիճանում.

- 1) ածխաթթու, ամոնիակ, բենզոլ
- 2) Էթանալ, բենզոլ, սիլան
- 3) մեթան, ջուր, ֆոտոազրածնական թթու
- 4) էթանոլ, մեթիլամին, քացախաթթու

15


Որո՞նք են օրսիդացման գործընթացներ.

- | | | |
|--|---|---|
| ա) $\text{H}^0 \rightarrow \text{H}^+$ | գ) $\text{NO}_2^- \rightarrow \text{NO}_2$ | ե) $\text{SO}_2 \rightarrow \text{SO}_4^{2-}$ |
| բ) $\text{H}^0 \rightarrow \text{H}^-$ | դ) $\text{Cu}^{2+} \rightarrow \text{Cu}^0$ | զ) $\text{ClO}^- \rightarrow \text{Cl}^0$ |

- 1) զ, դ, ե
- 2) բ, դ, զ
- 3) ա, զ, ե
- 4) ա, զ, զ

16

Ո՞ր արտահայտությունն է ձիշտ $A + B \rightarrow Q$ ուրվագրով ընթացող ռեակցիայի վերաբերյալ ըստ պատկերված զծանկարի.



- 1) զծանկարի վրա պատկերված է հավասարակշռային պահը
- 2) ռեակցիայի ընթացքում ջերմային երևույթներ չեն նկատվում
- 3) ռեակցիան ջերմանջատիչ է
- 4) ռեակցիան ջերմակլանիչ է

17

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) sp^2 հիբրիդացմանը բնորոշ է 120° անկյունը և հարթ կառուցվածքը
- 2) sp^3 հիբրիդային օրբիտալն ունի անհամաշափ մարզահանտելի տեսք
- 3) հիբրիդացման հետևանքով նույնացվում է և՝ օրբիտալի տեսքը, և՝ ձևը
- 4) հիբրիդացումն ապահովում է օրբիտալների նվազագույն փոխածածկում

18

Ո՞ր աղի ջրային լուծույթի էլեկտրոլիզի դեպքում է ջուրը ենթարկվում և՝ անոդային օքսիդացման, և՝ կաթոդային վերականգնման.

- 1) $CuCl_2$
- 2) Na_2SO_4
- 3) $NaBr$
- 4) $AgNO_3$

19

Ո՞ր պնդում(ներ)ն է(են) ձիշտ K^+ , Na^+ , SO_4^{2-} իոնների հայտաբերման վերաբերյալ:

1. K^+ իոնները կրակի բոցը ներկում են մանուշակագույն:
2. Na^+ իոնները կրակի բոցը ներկում են կարմիր:
3. SO_4^{2-} իոնները հայտաբերում են բարիումի լուծելի աղերի միջոցով:

- 1) 1, 3
- 2) 1, 2
- 3) միայն 2
- 4) 2, 3

20 Ցինկի, երկաթի և ալյումինի փոշիների խառնուրդը բաժանել են երկու հավասար մասի: Մի մասի և աղաթթվի փոխագրեցությունից անջատվել է *a* զազ, իսկ մյուս կեսի և նատրիումի հիդրօքսիդի նոսր լուծույթի փոխագրեցությունից՝ *b* զազ: Ո՞րն է *a* և *b* ծավալների փոխհարաբերությունը.

- 1) $2a = b$
- 2) $a = b$
- 3) $a > b$
- 4) $a < b$

21 Ո՞ր շարք են ներառված իոնային բյուրեղավանդակ առաջացնող նյութերի բանաձևեր.

- 1) ZnSO_4 , CCl_4 , CH_3COONa
- 2) N_2 , C , Cu
- 3) NH_4Cl , KF , AlCl_3
- 4) H_2O , NH_3 , NH_4NO_3

22 Ո՞ր շարք են ներառված ջրային լուծույթում նատրիումի սուլֆիտի հիդրոլիզի առաջին փուլի արգասիքներների դասերը.

- 1) թթու աղ և հիմք
- 2) թթու և հիմք
- 3) թթու և հիմնային աղ
- 4) թթու աղ և հիմնային աղ

23 Հետևյալ նյութերից որի՝ ավելացումով կմեծանա քացախաթթվի դիտցման աստիճանը ջրային լուծույթում.

- 1) C_6H_6
- 2) HCl
- 3) H_2O
- 4) CH_3COONa

24 Մանգանի (IV) օքսիդը ո՞ր ռեակցիաներում է հանդես գալիս որպես փոխագործ նյութ և ոչ թե կատալիզատոր. ա) աղաթթվից քլորի ստացում,
բ) կալիումի քլորատից թթվածնի ստացում, գ) բրոմաջրածնական թթվից բրոմի ստացում, դ) ջրածնի պերօքսիդից թթվածնի ստացում.

- 1) գ, դ
- 2) ա, զ
- 3) ա, դ
- 4) բ, զ


25 Զուր պարունակող անոթ են մղել հավասար ծավալներից կազմված թթվածնի և քլորաջրածնի խառնուրդ: Որոշ ժամանակ անց ջրի մեջ լուծված թթվածնի (ա մլ) և քլորաջրածնի (բ մլ) ծավալները ինչպես են փոխարաբերում.

- 1) $a = 2b$
- 2) $a > b$
- 3) $a = b$
- 4) $a < b$

26 Ո՞ր շարք ներառված նյութերից յուրաքանչյուրի հետ կփոխազդի ջրածինը համապատասխան պայմաններում.

- 1) S, Ar, Na
- 2) N₂, S, CO
- 3) NaOH, S, CO
- 4) O₂, N₂, NaCl

27 Հաստ փոխարկումների բերված շղթայի.



Ո՞ր շարք են ներառված ավելացվող ազդանյութերի քանածերը և ուսակցիաների պայմանները համապատասխան հերթականությամբ.

- 1) H₂O, MnO₂, KOH(լուծ. 20 °C), NaNO₃, H₂
- 2) H₂(hv), CH₄, KOH, t°, H₂
- 3) H₂(hv), KMnO₄, NaCl, t° և կատ., H₂
- 4) H₂(hv), KMnO₄, KOH(լուծ. 100 °C), t° և կատ., H₂

28 Հետևյալ նիտրատներից որո՞նք են ենթարկվում ջերմային քայլայման՝ անջատելով նաև թթվածին. 1. NaNO₃, 2. Pb(NO₃)₂, 3. NH₄NO₃, 4. Cu(NO₃)₂

- 1) 3, 4
- 2) 1, 2, 3
- 3) 1, 2, 4
- 4) 1, 3

29 Ո՞ր գույզ ներառված նյութերը կվերացնեն ջրի ընդհանուր կոշտությունը.

- 1) Na₃PO₄, NaOH
- 2) Na₃PO₄, Na₂CO₃
- 3) K₃PO₄, NaOH
- 4) NaNO₃, Ca(OH)₂

30 Ո՞ր շարք ներառված նյութերն են օգտագործում որպես վերականգնիչներ մետաղների արտադրությունում.

- 1) Cu, CH₄, CO, H₂S
- 2) Al, C, CO, H₂
- 3) Zn, H₂, NO₂, NH₃
- 4) Mg, C, CO₂, H₂

31 Համապատասխանեցնել ռեակցիայի ուրվագիրը, տեսակը և օրգանական վերջանյութի մոլեկուլում սիզմա կապերի թիվը.

ռեակցիայի ուրվագիր	ռեակցիայի տեսակ	սիզմա կապերի թիվը
ա) C ₃ H ₆ + H ₂ O $\xrightarrow{H^+}$	1) վերախմբավորման	Ա) 3
բ) C ₆ H ₁₄ $\xrightarrow{AlCl_3, t^o}$	2) տեղակալման	Բ) 6
գ) CH ₃ OH + CuO $\xrightarrow{t^o}$	3) միացման	Գ) 19
դ) C ₃ H ₇ Cl $\xrightarrow[\text{սպիռային}]{KOH, t^o}$	4) պոկման	Դ) 12
	5) օքսիդացման	Ե) 8
	6) պոլիկոնդեսման	Զ) 9
		Է) 11

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա3Դ, բ6Զ, զ5Ա, դ2Ե
- 2) ա3Է, բ1Գ, զ5Ա, դ4Ե
- 3) ա3Է, բ1Գ, զ5Բ, դ4Ե
- 4) ա2Է, բ1Գ, զ3Ա, դ4Է

32 Բենզոլի հոմոլոգի մոլեկուլը կազմված է 18 ատոմից: Դրա նիտրացումից գոյանում է միայն մեկ մոնոնիտրոածանցյալ: Ո՞րն է այդ հոմոլոգը:

- 1) 1,4 -երկմեթիլբենզոլ
- 2) էթիլբենզոլ
- 3) սոլուտ
- 4) 1,3-երկմեթիլբենզոլ

33 Ո՞ր շարք ներառված նյութերը համապատասխան պայմաններում կփոխազդեն թարմ ստացված պղնձի (II) հիդրօքսիդի հետ.

- 1) HCHO, C₂H₅OH, CH₃NH₃, CH₃CHO
- 2) CH₃OH, C₃H₅(OH)₃, HCHO
- 3) CH₃CHO, HCHO, HCOOH, C₃H₅(OH)₃
- 4) HCOOH, CH₃OH, C₂H₅OH

34

С8Н16 բանաձևով ալկենին բրոմաջրածին միացնելիս առաջանում է 3-բրոմ-2,5-երկմեթիլիեքսան: Նույն ալկենի հիդրումից ստացվում է ալկան: Ո՞ր միացությունից Վյուրջի ռեակցիայով կարելի է ստանալ այդ ալկանը.

- 1) 1-բրոմ-2-մեթիլպրոպան
- 2) 1-բրոմբութան
- 3) 2-բրոմբութան
- 4) 2-բրոմ-2-մեթիլպրոպան

35

Ո՞ր շարք են ներառված 1-պրոպանոլից ացետոնի ստացման գործընթացները համապատասխանաբար.

- 1) ջրի պոկում, ջրի միացում, վերականգնում
- 2) ջրի պոկում, օքսիդացում, վերականգնում
- 3) ջրի պոկում, ջրի միացում, օքսիդացում
- 4) օքսիդացում, վերականգնում, ջրի պոկում

36

Ո՞ր միացությունները կգունազրկեն բրոմաջուրը. ա) բենզոլ, բ) անիլին, գ) էթեն, դ) զլիցերին, ե) ֆենոլ.

- 1) բ, գ, դ
- 2) բ, զ, ե
- 3) ա, բ, զ
- 4) զ, դ, ե

37

Որո՞նք են բաց թողած բառերը.

Կատալիտիկ կրեկինզը իրականացնում են բնական կամ սինթետիկ առկայությամբ, ինչը հնարավորություն է ստեղծում գործընթացը տանելու ավելի ջերմաստիճանում:

- 1) կարբոնատների, բարձր
- 2) ալյումասիլիկատների, բարձր
- 3) ալյումասիլիկատների, ցածր
- 4) կարբոնատների, ցածր

38

С4Н8О2 բանաձևն ունեցող էսթերը փոխազդում է արծաթի (I) օքսիդի ամոնիակային լուծույթի հետ: Ո՞ր շարքում են բերված այդ պայմանին բավարարող էսթերների անվանումները.

- 1) էթիլացետատ, մեթիլպրոպիոնատ
- 2) պրոպիլֆորմիատ, իզոպրոպիլֆորմիատ
- 3) պրոպիլֆորմիատ, էթիլֆորմիատ
- 4) իզոպրոպիլֆորմիատ, մեթիլֆորմիատ

39

Ո՞ր նյութերի միջև է հնարավոր փոխազդեցություն համապատասխան պայմաններում.

ա) էթիլամինի և արծաթի (I) օքսիդի ամոնիակային լուծույթի

բ) անիլինի և բրոմի

գ) մեթիլամինի և կալիումի հիդրօքսիդի

դ) էթիլամինի և քլորաջրածնի

ե) անիլինի և ծծմբական թթվի

1) ա, բ, գ

2) ա, զ, ե

3) բ, զ, դ

4) բ, դ, ե

40

Միայն մեկ α -ամինաթթվի մնացորդներից կազմված եռպեպտիդի մոլեկուլային բանաձևը՝ $C_9H_{17}N_3O_4$ է: Ո՞րն է այդ ամինաթթուն և որքա՞ն է եռպեպտիդի մոլեկուլում sp^3 հիբրիդային վիճակում գտնվող ածխածնի ատոմների թիվը.

1) վալին, 9

2) գլիցին, 6

3) սերին, 9

4) ալանին, 6

41

Ի՞նչ միջին մոլային գանգվածով (գ/մոլ) գազային խառնուրդ կստացվի քացախաթթվի և կարազաթթվի նատրիումական աղերի $1 : 3$ մոլային հարաբերությամբ խառնուրդն ավելցուկով չոր նատրիումի հիդրօքսիդի հետ շիկացնելիս:

42 25 % զանգվածային բաժնով պղնձի (II) սոլֆատի 400 մլ լուծույթը ($\rho = 1,2 \text{ г/սմ}^3$) սառեցնելիս բյուրեղացել է 50 գ պղնձարջասապ՝ $\text{CuSO}_4 \cdot 5\text{H}_2\text{O}$: Նատվածքի ֆիլտրումից հետո մնացած լուծույթով անց են կացրել 11,2 լ (ն. պ.) ծծմբաջրածին: Որքա՞ն է լուծույթում մնացած պղնձի սոլֆատի զանգվածը (գ):

43 Պարզ նյութերից մեթանի ստացումը դարձելի պրոցես է. $\text{C} + 2\text{H}_2 \rightleftharpoons \text{CH}_4$: Վերցրած ջրածնի քանի տոկոսն է (ըստ ծավալի) փոխարկվել մեթանի, եթե հավասարակշռության վիճակում գտնվող զազային խառնուրդի ծավալի 60 % -ը մեթան է:

44 10°C ջերմաստիճանում ռեակցիայի արագությունը հավասար է $0,5 \text{ M}_\text{ո}/\text{l} \cdot \text{րոպե}$:
Որքան է ռեակցիայի արագությունը ($\text{M}_\text{ո}/\text{l} \cdot \text{րոպե}$) 50°C ջերմաստիճանում, եթե
ռեակցիայի արագության ջերմաստիճանային գործակիցը $\gamma=2$ է:

45 Ծծումբ պարունակող գազային միացության խտությունը 27°C -ում և $74,7 \text{ kPa}$
ճնշման պայմաններում $1,02 \text{ g/l}$ է: Որքան է միացության հարաբերական
խտությունն ըստ ջրածնի ($R = 8,3 \text{ }\Omega/\text{M}_\text{ո}\text{-K}$, $T = 273 \text{ K}$):

(46-47) Ծծմբի (VI) օքսիդի 30 % զանգվածային բաժնով 646 գ օլեումին ավելացրել են 64 % զանգվածային բաժնով ծծմբական թթվի լուծույթ ($\rho = 1,52 \text{ g/cm}^3$) և ստացել 10 % զանգվածային բաժնով ծծմբի (VI) օքսիդ պարունակող օլեում:

46

Որքա՞ն է ավելացրած 64 % զանգվածային բաժնով ծծմբական թթվի լուծույթի ծավալը(մլ):

47

Ի՞նչ զանգվածով (գ) նատրիումի հիդրօքսիդ կպահանջվի 30 % զանգվածային բաժնով ծծմբի (VI) օքսիդ պարունակող 210 գ օլեումի լրիվ չեղոքացման համար:

(48 - 49) Բութանի, բութենի և ջրածնի խառնուրդի խտությունն ըստ ջրածնի 12 է: Այդ խառնուրդը կալիումի պերմանգանատի լուծույթով անցկացնելուց հետո մնացել է նոր խառնուրդ, որի խտությունը ըստ ջրածնի 8 է:

48

Որքա՞ն է ջրածնի ծավալային բաժինը (%) ելային խառնուրդում:

49

Որքա՞ն է ծանր բաղադրիչի ծավալային բաժինը (%) վերջնական խառնուրդում:

- (50 - 51) Պայթեցրել են 10 մլ զազային ածխաջրածնի և 70 մլ թթվածնի խառնուրդը: Զրային գոլորշիների կոնդենսացումից հետո մնացած 65 մլ զազային խառնուրդը կալիումի հիդրօքսիդի լուծույթով անցկացնելիս զազային խառնուրդի ծավալը դարձել է 45 մլ :

50

Քանի[՞] ատոմ ջրածին է բաժին ընկնում ածխածնի մեկ ատոմին ածխաջրածնի մեկ մոլեկուլում:

51

Ի՞նչ զանգվածով (q) նստվածք կգոյանա այդ ածխաջրածնի մեկ մոլը կալիումի պերմանգանատի նոսր ջրային լուծույթով օքսիդացնելիս:

(52 - 53) Քլորացրածնի 25 % զանգվածային բաժնով 584 գ լուծույթի և 194 գ ցինկի սուլֆիդի փոխազդեցությունից անշատված զազը լրիվ այրել են ավելցուկով վերցրած թթվածնում: Ստացված ծծմբի (IV) օքսիդն անցկացրել են կալիումի հիդրօքսիդի 25 % զանգվածային բաժնով 672 գ լուծույթի մեջ:

52 Որքա՞ն է թթու աղի զանգվածային բաժինը (%) վերջնական լուծույթում:

53 Որքա՞ն է չեղոք աղի զանգվածը (գ) վերջնական լուծույթում:

(54 - 55) Նատրիումի քլորիդի, նիտրատի և սուլֆատի 40,25 գ խառնուրդը լուծել են 221,95 գ ջրում: Ստացված լուծույթին 31,2 գ բարիումի քլորիդ ավելացնելիս նստել է 23,3 գ նստվածք, որը հեռացնելուց հետո ֆիլտրատից քլորիդ իոնը լրիվ նստեցնելու համար պահանջվել է 40,8 % զանգվածային բաժնով արծաթի նիտրատի 250 գ լուծույթ:

54

Որքա՞ն է նիտրատ իոնի զանգվածային բաժինը (%) քլորիդ իոնը հեռացնելուց հետո մնացած լուծույթում:

55

Որքա՞ն է նատրիումի նիտրատի զանգվածը (մգ) ելային խառնուրդում:

(56 - 58) Համապատասխան պայմաններում 1 լ ծավալով փակ անոթում գտնվող մեկական մոլ/լ քլորաջրածինը և թթվածինը փոխազդել են և ստեղծվել է
 $4HCl_{(q)} + O_2{}_{(q)} \rightleftharpoons 2Cl_2{}_{(q)} + 2H_2O_{(q)}$ հավասարակշռությունը: Հավասարակշռային խառնուրդում քլորաջրածնի կոնցենտրացիան 0,2 մոլ/լ է:

56

Որքա՞ն է քլորի հավասարակշռային կոնցենտրացիան (մմոլ/լ):

57

Որքա՞ն է թթվածնի հավասարակշռային կոնցենտրացիան (մմոլ/լ):

58

Որքա՞ն է հավասարակշռության հաստատունի թվային արժեքը:

(59- 61) Մագնեզիուսի և պղնձի (II) քլորիդների հավասարամոլային խառնուրդը լուծել են 394 մլ ջրում և ավելացրել արծաթի նիտրատի 1 մոլ/լ կոնցենտրացիայով որոշակի ծավալով լուծույթ ($\rho = 1,1$ գ/մլ): Առաջացած 114,8 գ նստվածքը հեռացրել են և լուծույթի մեջ ընկղմել պղնձեն թիթեղ: Ռեակցիան ավարտվելուց հետո թիթեղի զանգվածը ավելացել է 15,2 գրամով:

59

Որքա՞ն է քլորիդների ելային խառնուրդի զանգվածը (գ):

60

Որքա՞ն է պղնձեն թիթեղը հանելուց հետո մնացած լուծույթի զանգվածը (գ):

61

Որքա՞ն է վերջնական լուծույթում պղնձի(II) նիտրատի զանգվածային բաժինը (%):

(62- 64) Թթվածնի և ազոտի(II) օքսիդի խառնուրդում թթվածնի ատոմների թիվը երեք անգամ մեծ է ազոտի ատոմների թվից : Ստացված զազային խառնուրդը անցկացրել են 40 % զանգվածային բաժնով նատրիումի հիդրօքսիդի 1200 գ լուծույթի մեջ: Արդյունքում գոյացել է 637,5 գ աղ: Այնուհետև ավելացրել են 195 գ ջուր:

62

Որքա՞ն է բոլոր ռեակցիաներում ելային թթվածնի փոխարկման աստիճանը (%):

63

Որքա՞ն է վերջնական լուծույթում ալկալու զանգվածային բաժինը (%):

64

Որքա՞ն է ազոտի (II) օքսիդի ծավալը սկզբնական խառնուրդում (լ.,ն.պ.):

- (65 - 67) Նորմալ բութանի 87 գ նմուշը կրեկինզի ենթարկելիս կլանվել է $1,65Q$ կԶ ջերմություն, իսկ կրեկինզին ընթացել է երկու ուղղությամբ՝ ըստ հետևյալ ջերմաքիմիական հավասարումների.



Ստացված զազային խառնուրդն անցկացրել են անհրաժեշտ քանակով բրոսի 15 % զանգվածային բաժնով բրոմաջրի միջով:

65

Բութանի ո՞ր մասն է (%) քայլայվել մեթանի և պրոպենի առաջացմամբ:

66

Որքա՞ն է ծախսված բրոմաջրի զանգվածը (q):

67

Որքա՞ն է ստացված փոքր մոլային զանգվածով բրոմածանցյալի զանգվածը (q):

68

Համապատասխանեցնել ռեակցիաների ելանյութերը և վերջանյութերը.

Ելանյութեր	Վերջանյութեր
w) $C_6H_{12}O_6 \xrightarrow{Ag[(NH_3)_2]^+, t}$	1) $C_4H_9COOH + CH_3ONa$
p) $CH \equiv CCH_2CH_3 + H_2O \xrightarrow{t^o}$	2) $CH_3CH_2CHOCH_3$
q) $C_4H_9COOCH_3 + H_2O \xrightarrow{+NaOH, t}$	3) $C_6H_{14}O_6$ (սորբիտ)
η) $CH_3CH_2CH_2CH=O + 2Cu(OH)_2 \rightarrow$	4) $C_6H_{12}O_7$ (գյուկոնաթթու)
	5) $CH_3CH_2COOH + 2CuO + H_2O$
	6) $CH_3CH_2CH_2COOH + Cu_2O + 2H_2O$
	7) $C_4H_9COONa + CH_3OH$

69

Հաստատել կամ հերքել պնդումների ճշմարտացիությունը քիմիական նյութերի և դրանց բաղադրություններում առկա տարրերի ատոմների հատկությունների վերաբերյալ.

- 1) Մետաղը կերամաշումից պաշտպանելու նպատակով այդ մետաղի հպումն առավել ակտիվ մետաղի հետ կոչվում պրոտեկտորային պաշտպանություն:
- 2) H_2O , $BeCl_2$ և NH_3 մոլեկուլներից գծային կառուցվածք ունի միայն $BeCl_2$ -ը և թթվածնի, բերիլիումի և ազոտի ատոմները համապատասխանաբար գտնվում են sp^3 , sp , sp^3 հիբրիդային վիճակներում:
- 3) Ե՛վ երկաթը, և՝ այսումինը սենյակային ջերմաստիճանում հեշտությամբ փոխագրում են խիտ ազոտական և ծծմբական թթուների հետ:
- 4) Օպայի մասնակի հիդրոլիզից առաջանում է մալթոզ դիսախարիդը (երկշաքար), իսկ լրիվ հիդրոլիզի արդյունքում՝ α -գլյուկոզ:
- 5) Ֆենոլի մոլեկուլում ($-OH$) խմբի ազդեցությամբ էլեկտրոնային խտությունը բենզոլային օղակի 2,4,6 դիրքերում փոքրանում է:
- 6) Մեթիլ- և էթիլսպիրտների խառնուրդը խիտ ծծմբական թթվի հետ տաքացնելիս ($t < 140^\circ C$) հիմնականում առաջանում են՝ երկէթիլ-, երկմեթիլ-, մեթիլէթիլեթերի խառնուրդ:

Արծաթի(I) և պղնձի (II) նիտրատների խառնուրդը ենթարկել են ջերմային քայլայման: Առաջացել է 1,64 գ պղնդ մնացորդ և անջատվել է զազային խառնուրդ, որը ջրի միջով բաց թողնելիս՝ 0,64 գ զազ չի կլանվել: Նույն զանգվածով նիտրատների խառնուրդը լուծել են 136,8 գ ջրում և լուծույթը ենթարկել էլեկտրոլիզի իներտ էլեկտրոդներով: Հաստատել կամ հերքել պնդումների ճշմարտացիությունը խնդրի վերաբերյալ:

- 1) Ելային խառնուրդի էլեկտրոլիզի արդյունքում կաթոդի վրա անջատվել է 11,84 գ մետաղների խառնուրդ:
- 2) Էլեկտրոլիզից հետո մնացած լուծույթում պարունակվում է 11,34 գ նյութ:
- 3) Նյութի զանգվածային բաժինը էլեկտրոլիզից հետո մնացած լուծույթում, եթե անողի վրա անջատվել է 13,776 լ (ն.պ.) զազ 9 % է:
- 4) Ելային խառնուրդում պարունակվել է 0,08 մոլ արծաթի նիտրատ:
- 5) Վերջնական լուծույթի զանգվածը կազմել է 130 գ:
- 6) Նիտրատների խառնուրդը ջերմային քայլայման ենթարկելիս անջատվել է 20 գ զազային խառնուրդ: